ԿԱՐԾԻՔ

Տիգրան Սամվելի Ղազարյանի՝ «Քրեական վարույթ նախաձեռնելու հիմնախնդիրները ՀՀ քրեական դատավարությունում» վերտառությամբ ԺԲ.00.04 – Դատական իրավունք (դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ հետախուզական գործունեության տեսություն) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Քրեական վարույթ նախաձեռնելու քրեադատավարական ընթացակարգերը մշտապես ունեցել և շարունակում են ունենալ մեծ կարևորություն քրեական դատավարությունում ինչպես հանրային, այնպես էլ մասնավոր շահերի արդյունավետ կենսագործման տեսանկյունից: Ընդ որում, թե՛ մասնագիտական գրականության մեջ և թե՛ քրեադատավարական պրակտիկայում այս փուլի հետ կապված առկա են միմյանցից արմատապես տարբերվող մոտեցումներ՝ կազմակերպելու քրեական դատավարության արդյունավետ սկզբնավորումը: Ավելին, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագիծն առաջարկում է ներկայիս «ստուգում-որոշում» մոդելը փոխարինել «հաղորդում-արձանագրություն» մոդելով, և թե՛ նոր մոդելի տեսական ու կիրառական արդյունավետությունը, թե՛ անցման անցնցում իրականացումը կարևոր մասնագիտական մարտահրավերներ են, որոնք ենթակա են խորը և համապարփակ հետազոտության: Այս տեսանկյունից՝ ատենախոսի ընտրած թեման ունի մեծ արդիականություն:

Քրեական վարույթ նախաձեռնելու հիմնախնդիրների պատշաճ գիտական հետազոտման արդիականությունը պայմանավորված է նաև ծավալուն իրավակիրառական պրակտիկայով, ներառյալ՝ բարձր դատարանների իրավաբանությունը, որոնք անընդհատ նորանոր խնդիրներ են առաջ քաշում քրեական դատավարության գիտության առջև՝ թելադրելով նոր պահանջների լույսի ներքո անընդհատ դիտարկել քրեական վարույթ նախաձեռնելու կարգավորումների ամբողջականությունը և մշակել հատվածական լուծումները համակարգային դարձնող առաջարկություններ:

Վերոգրյալի հիման վրա քրեական վարույթ նախաձեռնելու հիմնախնդիրների ուսումնասիրության արդիականությունն իրավունքի զարգացման ներկայիս փուլում լիովին հիմնավորված է:

Ատենախոսության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հեղինակին հաջողվել է հաջողությամբ լուծել իր առջև դրված գիտական խնդիրներն ու նպատակները և խորն ու հանգամանալի հետազոտման ենթարկել քրեադատավարական այս ինստիտուտին վերաբերող կարևորագույն տեսական ու գործնական հիմնախնդիրները, շատ դեպքերում կատարել գիտականորեն հիմնավորված առաջարկություններ: Մասնավորապես, հեղինակին հաջողվել է բազմակողմանի ձևով ներկայացնել քրեական վարույթ նախաձեռնելու հասկացությունը և խնդիրները, վեր հանել և վերլուծել քրեական վարույթի նախաձեռնման առիթներին, հիմքերին, այդ փուլում փաստական տվյալների ապացուցողական նշանակությանը, իրավական շահ ունեցող սուբյեկտների կարգավիճակին, համապատասխան ընթացակարգերի նկատմամբ դատախազական հսկողությանը և դատական վերահսկողությանը վերաբերող տեսական և գործնական մեծաթիվ հիմնահարցեր: Հատկապես արժեքավոր են հեղինակի վերլուծությունները, որոնք վերաբերում են հանցագործության մասին հաղորդումների տարբերակմանը, քրեական գործի հարուցման փուլում ապացուցողական գործողությունների շրջանակի ընդլայնմանը, փաստացի տուժողի և փաստացի կասկածյալի դատավարական իրավունքներին, հանցագործությունների մասին հաղորդումների ընդունման, գրանցման և հաշվառման գործառույթի պատշաճ իրավական կանոնակարգմանը:

Կարևոր է ընդգծել, որ Տ.Ղազարյանի հետազոտությունը աչքի է ընկնում ինչպես մասնագիտական գրականության, այնպես էլ դատական իրավաբանության, իրավակիրառական պրակտիկայի, արտասահմանյան երկրների համապատասխան իրավակարգավորումների ծավալուն օգտագործմամբ: Մասնավորապես, հեղինակն օգտագործել է ինչպես հայաստանյան, այնպես էլ խորհրդային և ռուսաստանյան տասնյակ դատավարագետների արժեքավոր աշխատություններ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ՀՀ Սահմանադրական դատարանի, ՀՀ վճռաբեկ դատարանի բազմաթիվ վերաբերելի նախադեպային որոշումներ, քննչական մարմինների կարգապահական պրակտիկայի նյութեր, քրեադատավարական վերաբերելի վիճակագրություն, ինչպես նաև համասեռ քրեադատավարական կարգավորումներ

ունեցող մի քանի պետությունների քրեադատավարական օրենսդրություն: Ատենախոսության մեջ լայնորեն օգտագործված է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծում ամրագրված իրավակարգավորումները, ընդ որում՝ առանձին դեպքերում հեղինակը հանդես է բերում նախագծում տեղ գտած լուծումների զարգացմանն ուղղված արժեքավոր նկատառումներ:

Գրախոսվող ատենախոսության կառուցվածքը համարժեք է հետազոտության առարկայի առանձնահատկություններին և հետազոտական խնդիրների շրջանակին: Աշխատանքը կազմված է ներածությունից, ինը պարագրաֆ ընդգրկող երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության, իրավական ակտերի և պրակտիկ նյութերի ցանկից, մեկ հավելվածից: Ատենախոսության կառուցվածքը համապատասխանում է թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող չափորոշիչներին:

Թեկնածուական ատենախոսության բովանդակությունը համապատասխանում է աշխատանքի կառուցվածքին և ընտրված թեմային: Հետազոտության արդյունքում կատարված եզրահանգումները գիտականորեն հիմնավորված են և համարժեքորեն փաստարկված: Դրանք վստահաբար ունեն ինչպես տեսական, այնպես էլ ընդգծված գործնական նշանակություն, քանի որ լիարժեքորեն կարող են օգտագործվել թե՛ քրեադատավարական օրենսդրության կատարելագործման և թե իրավակիրառական պրակտիկայի զարգացման գործում: Ավելին, թեկնածուական ատենախոսության մեջ կատարված մի շարք առաջարկություններ կարող են օգտագործվել որպես նոր քրեադատավարական օրենսդրության սահուն անցումն ապահովող միջանկյալ կարգավորումներ (նյութերի նախապատրաստության գործիքակազմի ընդլայնում, փաստացի կասկածյալի կարգավիճակ և այլն):

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է աշխատանքի կառուցվածքին և բովանդակությանը:

Վերոգրյալով հանդերձ, կցանկանայինք որոշակի նկատառումներ ներկայացնել թեկնածուական ատենախոսությանը վերաբերող մի քանի հարցերի շուրջ:

Առաջին, թեև առանձին հարցերի վերաբերյալ հեղինակն օգտագործել է վերջին շրջանում «ստուգում-որոշում» մոդելից «հաղորդում-արձանագրություն» մոդելի անցում իրականացրած՝ համադրելի քրեադատավարական մշակույթ ունեցող պետությունների փորձը, այնուհանդերձ խիստ ցանկալի կլիներ, որ այն ուսումնասիրվեր ավելի հանգամանալից՝ հնարավոր

դժվարությունները և խնդիրները նախապես վեր հանելու և հնարավորինս չեզոքացնելու նպատակով: Խոսքն առաջին հերթին վերաբերում է Ղազախստանի փորձին, որտեղ 2014 թվականին ընդունվել և 2015 թվականին ուժի մեջ է մտել նոր քրեադատավարական օրենսգիրքը (նոր քրեական օրենսգրքի և վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի հետ մեկտեղ): Ղազախստանի նոր ՔԴՕ-ն ունի ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի հիմքում ընկած հայեցակարգին շատ համարժեք կարգավորումներ, այդ թվում՝ քրեական վարույթի նախաձեռնման հարցերով, և 2015-2020 թվականներին այդ երկիրը կուտակել է մեզ համար շատ ուսանելի փորձ, որի ներկայացմամբ թեկնածուական հետազոտությունը մեծապես կշահեր:

Երկրորդ, ատենախոսը բավական մեծ ուշադրություն է դարձնում քրեական վարույթի նախաձեռնման ընթացաշրջանում ապացուցման իրավունքի հարցերին, մասնավորապես՝ առաջարկում է հստակ ամրագրել այդ փուլում ապացուցման ենթակա հանգամանքների շրջանակը, ընդլայնել թույլատրելի ապացուցողական գործողությունների ցանկը և այլն: Այս առումով ցանկալի կլիներ, որ հեղինակն ավելի հանգամանալից անդրադառնար քրեական գործի հարուցման փուլում իրավական կանխավարկածների և հատկապես անմեղության կանխավարկածի առանձնահատուկ դրսևորումներին՝ հատկապես չփարատված կասկածների մեկնաբանման դիտանկյունից: Այս առումով իրավակիրառական պրակտիկայում առկա է միտում չփարատված կասկածները հօգուտ մեղադրյալի մեկնաբանելու հիմնադրույթը կիրառելի համարել նյութերի նախապատրաստության ընթացքում, և այդ հիմնախնդրի ուսումնասիրությունն ու դրա արդյունքում համապատասխան առաջարկությունների ներկայացումը կարող էր արժեքավոր կիրառական նշանակություն ունենալ իրավակիրառական պրակտիկան կատարելագործելու համար:

Հարկ է միաժամանակ փաստել, որ ներկայացված նկատառումները կրում են մասնավոր բնույթ և չեն արժեզրկում ընդհանուր առմամբ հաջողված ատենախոսությունը:

Վերը նշվածի պայմաններում գտնում եմ, որ Տիգրան Ղազարյանի թեկնածուական ատենախոսությունը իրենից ներկայացնում է ինքնուրույն ամբողջական, համալիր և ավարտուն հետազոտություն, որում հեղինակին հաջողվել է լուծել իր առջև դրված խնդիրներն ու կատարված հետազոտության արդյունքում ներկայացնել ինքնուրույն առաջարկություններ: Այդ մասին են

վկայում պաշտպանության ներկայացվող դրույթներում և աշխատանքի եզրակացությունում շարադրված հետևությունները:

Գտնում եմ, որ Տիգրան Սամվելի Ղազարյանի «Քրեական վարույթ նախաձեռնելու հիմնախնդիրները ՀՀ քրեական դատավարությունում» վերտառությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը ամբողջությամբ համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից նմանատիպ աշխատանքերին ներկայացվող հիմնական պահանջներին, իսկ ատենախոսության հեղինակն արժանի է հայցվող գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի

քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ,

իրավաբանական գիտությունների թեկնածու

Ռ.Ն.Մելիքյան

7 սեպտեմբերի 2020թ.

Ռ.Ն.Մելիքյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դեկանի տեղակալ

Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հ.Խաչիկյան